«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸԹՆԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման. ձևերը, ինքնաստուգում և ինքնավերահսկում

Առարկան՝ պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մուրադյան Ռուզաննա

Ուսումնական հաստատություն՝ՀՀ Արարատի մարզի Այգեպատի մ/դ

Արտաշատ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ..... 3

ԳԼՈՒԽ 1. **Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը.....** 5

1.1 Ինքնուրույն ուսուցման գործընթացի առկա հիմնախնդիրները ..... 5

ԳԼՈՒԽ 2. **Ինքնաստուգում և ինքնավերահսկում** ..... 10

2.1 Ինքնաստուգման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթության բնագավառում ..... 10

2.2 Ինքնավերահսկման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթության բնագավառում.. 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ..... 16

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ……17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ..... 18

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթության ներկա իրավիճակը պահանջում է, որ ժամանակակից մանկավարժը մյուս գործառույթների հետ մեկտեղ կարողանա իրականացնել մանկավարժական գործընթացի խորը, գիտական հիմնավորված վերլուծություն: Միայն նման դեպքում մանկավարժի աշխատանքում տեղի կունենա առաջընթաց, որը կնպաստի նաև ընդհանուր կրթության ոլորտում առաջընթացի արձանագրմանը:

Արդի դպրոցի խնդիրը ոչ միայն կրթության բարձր մակարդակի ապահովումն է, այլև ուսումնական գործունեության մեջ սովորողների մտածողության զարգացումն է, որը սովորողների մոտ ձևավորում է կարողություններ և հմտություններ ունեցած գիտելիքները ինքնուրույն լրացնելու, դրանք տեղին և ճիշտ օգտագործելուն:

Ուսումնական գործունեությունն իրենից ներկայացնում է նպատակամղված, հստակ կազմակերպված, բովանդակային առումով հարստացված և մեթոդապես հագեցած՝ ճանաչողական և դաստիարակչական շփման, փոխազդեցության, սովորողի և սովորեցնողի փոխհարաբերությունների համակարգ:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն:

Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ուսումնական գործընթացի պլանավորումը հիմնված է մի շարք պահանջների պահպանման վրա, որոնք ապահովում են դրանց իրականացման իրականությունը, շարունակականությունը և կոնկրետությունը: Առաջին հերթին, սա թիրախային

կողմնորոշման պահանջի պահպանումն է: Նպատակասլացությունն այս դեպքում ընկալվում է որպես թիրախի որոշակի սահմանում՝ հաշվի առնելով սովորողների անհատական, տարիքային, շարժառիթներով պայմանավորված հանգամանքները՝ զարգացնելով և խորացնելով ուսուցիչների և սովորողների աշխատանքի հիմնական ոլորտները: Սա նաև մասնավոր նպատակների սահմանումն է ուսուցիչների, դասարանների ուսուցիչների և հասարակական կազմակերպությունների գործունեության մեջ: Պահանջներից մեկը պլանավորման հեռանկարն է, երբ պահանջների նպատակներն ընդունվում են ուսուցիչների և աշակերտների կողմից, առաջին հերթին՝ որպես նպատակներ՝ համապատասխան, հասկանալի, ցանկալի և, երկրորդ, որպես երկար ժամանակ ծրագրված ռազմավարություն, բայց, այնուամենայնիվ, իրատեսորեն գիտակցված:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ուսուցման գործընթացի՝ մասնավառրապես դասի պլանավորումն ըստ սովորողների տարիքային առանձնահատկությունների ու կրթական մակարդակի:

Ելնելով վերոնշյալ նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ինքնուրույն ուսուցման գործընթացի էությունը,
- Ուսումնական գործընթացի պլանավորումը՝ որպես ուսուցման արդյունավետության բարձրացման պայման
- Ներկայացնել ինքնուրույն դասը որպես ուսուցման կազմակերպման հիմնական ձև
- Ներկայացնել դասի կառուցվածքն ըստ տեսակների, դասի նկատմամբ ընդհանուր ժամանակակակից մանկավարժական պահանջները
- Ուսուցման գործընթացի պլանավորման ձևի ընտրությունն ըստ դասի նպատակի և խնդիրների
- Ուսումնական գործունեության կազմակերպումը և հիմնական ձևերի առնչությունը աշակերտների անհատական առանձնահատկություններին և կրթական մակարդակին:

# ԳԼՈՒԽ 1. ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՁԵՎԵՐԸ

## ԳԼԽԱՎՈՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

### 1.1 Ինքնուրույն ուսուցման գործընթացի առկա հիմնախնդիրները

Ինքնուրույն ուսուցման գործընթացի հիմնական խնդիրն է հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ դա հնարավոր է սովորողների ինքնուրույն գործունեության ճիշտ կազմակերպման միջոցով: Երբ երեխան դեռևս փոքր տարիքից կարողանում է ինքնուրույն սովորել, ապա այդ կարողությունը դառնում է նրա սեփականությունը ամբողջ կյանքի ընթացքում:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը:

Պետք է կիրառել ակտիվ մեթոդներ, որի հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց, աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս դարձնելու համար

կարելի է իրականացնել նաև ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

Դասավանդման ժամանակակից մեթոդների արտահայտչականության առավելությունները հիմնավորվում է չինական հին ասույթով. «Ասա ինձ, և ես կմոռանամ, ցույց տուր ինձ, և ես կհիշեմ, տուր կատարեմ, և ես կհասկանամ»: Այս բառերում ամփոփված է ակտիվ ուսուցման ողջ էությունը:

Ժամանակակից դասին ներկայացվում են մի շարք պահանջներ՝ կրթական, դաստիարակաչական, զարգացնող և կազմակերպչական:

Դիդակտիկական/կրթական/ պահանջներն իրականացնելու համար ուսուցիչը նախօրոք որոշում է դասի հիմնական խնդիրները, առանձնացնում գլխավոր և երկրորդական տարրերը, դասերի համակարգում որոշում յուրաքանչյուր թեմայի և դասի տեղը, որոշում է դասի բովանդակությունը՝ հաշվի առնելով աշակերտների իրական հնարավորությունները: Կրթական պահանջներն իրականացնելու համար դասն սկսելուց առաջ ուսուցիչը ընտրում է ուսուցման արդյունավետ մեթոդները և հնարները: Օգտագործվում են միջառարկայական կապերը՝ հաշվի առնելով աշխատանքի մանկավարժա-հոգեբանական պայմանները:

Ինքնուրույն աշխատանքի միջոցով հնարավոր է հասնել այն բանին, որ սովորողները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, որոնք պարտադիր են ինքնակատարելագործման և ինքնակրթության համար:

Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է տալ այդ հնարավորությունը: Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն արդեն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը:

Դասի դաստիարկաչական պահանջները իրականացնելու համար ուսուցիչը դնում և լուծում է դաստիարակչական խնդիրներ՝ բարոյական, գեղագիտական, գաղափարաքաղաքական և այլն: Այս ընթացքում աշակերտների տեսածի, լսածի և

դասի ընթացքում կիրառված մեթոդների արդյունքում երեխայի մոտ ձևավորվում են որոշակի կարծիքներ, հայրենասիրական մարդասիրական հայացքներ, բարոյական որակներ, գեղագիտական ճաշակ և այլն:

Գիտությունների և արտադրության ինտեգրացման մեր ժամանակներում առաջնակարգ նշանակություն է ստանում գիտությունների համագործակցությունը՝ միջգիտական կապերը: Քանի որ ուսումնական առարկաները ուսուցանում են գիտությունների հիմունքները, ուստի հրատապ է դառնում նաև ուսուցման գործընթացում միջառարկայական կապերի իրականացումը: Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ իրականությունն միջառարկայական կապերով: «Ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ոչ թե ինտեգրացում, այլ ուսումնական առարկաների ընթացակարգային կորդինացում միջառարկայական կապերի, որոնք արտացոլում են բնության և հասարակության մեջ առկա կապերը»:

Մանկավարժական պրակտիկայում երբեմն նույնացնում են միջառարկայական կապերը իրականացնող և ինտեգրացված դասերը; Ինտեգրացված դասերը պիտի տարբերել միջառարկայական կապերը իրականացնող սովորական դասերից, որտեղ ուսումնասիրվում են ոչ թե ընտրովի թեմաներ /ինչպես ինտեգրացված դասերի ժամանակ է արվում/, այլ տվյալ առարկայի դպրոցական ծրագրային նյութերը: Ինտեգրացված դասերը լավ է նկարագրել Ի. Պ. Պոդլասին, գրելով. «Ինտեգրացված դասերին միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրացված դասի գլխավոր նպատակը: Երբ որոշված է ընդհանուր նպատակը, արդեն առարկաների բովանդակությունից ընտրում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են նպատակին հասնելու համար: Սակայն դեռևս ստեղծված չեն բավականաչափ ինտեգրացված դասագրքեր, ընդգծված և համակարգված չեն ուսումնական նյութերը, որը ուսուցչի համար դժվարին խնդիր է: Սակայն ուսուցչի համար դժվար չէ նախապես պլանավորել, թե տվյալ առարկայից այս կամ այն թեման, ենթաթեման անցնելիս ինչպիսի կապեր է ստեղծվելու հարակից առարկաների միջև:

Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեությունում: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխույժ: Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծագործական, հետազոտական աշխատանքը: Բացի վերը նշվածից, այս տեսակ դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

Հնացած մանկավարժական մեթոդներն ու տեխնոլոգիաները, դասի անցկացման դաս-դասախոսություն ձևաչափը ժամանակակից տեխնոլոգիաների և գիտական նորամուծությունների ֆոնի վրա սպառել է իրեն: Նախկին մեթոդները այլևս արդյունավետ չեն: Դասի արդյունավետ անցկացման և դասի նպատակների հասնելու համար պարտադիր է դարձել զանազան մուլտիմեդիական միջոցների, ինտերակտիվ քարտեզների, տեսասահիկների կիրառումը դասի ժամանակ, աշակերտների ակտիվ ուսուցման կիրառումը, աշակերտին սոսկ ուղղություն տալով՝ նրան ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելն ու դասից դուրս աշակերտի ինքնուրույն աշխատանքի խթանումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ:

Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և աշակերտների միջև, այնպես էլ իրենց, աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, հետաքրքրիր նյութերի ցուցադրություններ:

# ԳԼՈՒԽ 2. ԻՆՔՆԱՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՒՄ

## 2.1 Ինքնաստուգման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթության բնագավառում /մոդուլային ուսուցման տեխնոլոգիա/

Հարմարվողական տեխնոլոգիայի պայմաններում ուսումը հիմնականում դառնում է ակտիվ ինքնուրույն գործունեություն. Դա պարտադիր և լրացուցիչ գրականության ընթերցումն է, զեկուցումներ պատրաստելու աշխատանքն է, տարբեր բարդության խնդիրների լուծումն է, լաբորատոր և գործնական աշխատանքներն են, անհատական աշխատանքն է ուսուցչի հետ, գիտելիքների ձեռքբերման հսկողությունն է և այլն:

Հարմարվողական տեխնոլոգիան նախատեսում է ստուգման բոլոր տեսակները՝ ուսուցչի հսկողությունը, ինքնահսկողություն, սովորողների փոխադարձ հսկղություն, հսկողություն տեխնիկական միջոցներով և ոչ մեքենայական հսկող ծրագրերով և այլն: Հակառակ միայն մեկ ուղղությամբ ընթացող հետադարձ կապի (ուսուցիչ-աշակերտ), որը լավ չի իրականացնում ուսուցման գործառությունը, ներդրվում է բազմալիք հետադարձ կապեր (ուսուցիչ-աշակերտ, աշակերտ–ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-սովորողների կելեկտիվ, աշակերտ–սովորողների կոլեկտիվ), որը նախատեսում է փոխհարաբերությունների բացառապես այլ ձևեր[1]:

**Մոդուլային ուսուցման տեխնոլոգիա**յի էությունն այն է, որ սովորողին տրվում է որոշակի թեմայի համար մշակված ուսումնական նյութի փաթեթ՝ մոդուլ, որը սովորողն ինքնուրույն ուսումնասիրում և յուրացնում է: Մոդուլը մի ամբողջություն է, որի մեջ մտնում են թե՛ ուսումնական նյութի բովանդակությունը, թե՛ դա յուրացնելու տեխնոլոգիան:

Մոդուլը կազմված է՝

[1] Беспалько В. П. Педагогика и прогрессивные технологии обучения. М., 1995. 412 с.

գործողությունների նպատակային պլանից

- տեղեկատվության կամ նյութի շարադրանքից
- ուսուցման գործընթացը կարգավորող մեթոդական ցուցումներից

Այս տեխնոլոգիան կիրառելու դեպքում ուսուցիչը պետք է մշակի յուրաքանչյուր դասարանի ուսումնական նյութին համապատասխան մոդուլային ուսումնական ծրագիր, ընդգծի դրանցից ամեն մեկի նպատակները:

Ժամանակակից դիդակտիկայում գործադրվում են պրոբլեմային ուսուցման երեք մակարդակներ:

Առաջին մակարդակի դեպքում ուսուցիչն առաջադրում է պրոբլեմը, ձևակերպում է այն և աշակերտներին ուղղում դեպի լուծման ուղիների ինքնուրույն որոնումները:

Երկրորդ մակարդակը առաջինից տարբերվում է նրանով, որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրունաբար ձևակերպելու և լուծելու ընդունա-կություն, իսկ ուսուցիչը միայն նշում է պրոբլեմը:

Երրորդ մակարդակում ուսուցիչը նույնիսկ չի նշում պրոբլեմը: Աշակերտը այն պետք է տեսնի տեքստում ինքնուրույնաբար, ձևակերպի և հետազոտի նրա լուծման հնարավորությունները և եղանակները: «Այս ամենի արդյունքը լինում է այն,- գրում է հոգեբան Վ. Ա. Կրուտեցկին,- որ աշակերտի մեջ դաստիարակվում է պրոբլեմը ինքնուրույնաբար տեսնելու, պրոբլեմային իրավիճակն ինքնուրույաբար վերլուծելու և ինքնուրույնաբար ճիշտ պատասխան տալու ընդունակություն»[2]: Այսպիսով, երրորդ մակարդակում աշակերտի գործունեությունը լրիվ ինքնուրույն է:

Աշակերտը ինքնաստուգում և ինքնավերահսկման կանոններին է ծանոթանում ուսուցչի շնորհիվ և ավելի ճիշտ է գնահատում իր ուսումնական գիտելիքները ։

Շատ հաճախ ուսուցիչները թույլ չեն տալիս, որ սովորողներն ամենահասարակ աշխատանքներն ինքնուրույն կատարեն: Այդ պատճառով սովորողների մեջ չի ձևավորվում ինքնավստահություն:

---

[2] Психология: учеб. для пед. училищ / В. А. Крутецкий. - 2-е изд., перераб. и доп. - Москва : Просвещение, 1986, էջ 291

Որպեսզի սովորողի մեջ ձևավորվի իր ուժերի նկատմամբ վստահություն, դրան պետք է նպաստեն տանը՝ ծնողը, դպրոցում՝ ուսուցիչը:

## 2.2 Ինքնավերահսկման հիմնախնդիրների լուծման մեթոդները կրթության բնագավառում

Ինքնավերահսկողությունը սեփական վարքը, հույզերը և մտքերը կանոնավորելու ունակությունն է ի պատասխան գայթակղությունների և ազդակների: Որպես գործադիր գործառույթ՝ այն ճանաչողական գործընթաց է, որն անհրաժեշտ է կարգավորելու սեփական վարքագիծը՝ կոնկրետ նպատակներին հասնելու համար:

Հոգեբանության մեջ հարակից հայեցակարգ է հուզական ինքնակարգավորումը: Համաձայն ուսումնասիրությունների՝ ինքնակարգավորումը, լինի դա հուզական, թե վարքային, սահմանափակ ռեսուրս է, որը գործում է էներգիայի նման: Կարճաժամկետ հեռանկարում ինքնակարգավորման չափից ավելի օգտագործումը կհանգեցնի դրա սպառման: Այնուամենայնիվ, երկարաժամկետ հեռանկարում ինքնակարգավորման կիրառումը կարող է ժամանակի ընթացքում ամրապնդվել և բարելավվել:

Ցածր ինքնավերահսկողություն ունեցող անհատները հակված են լինելու բռնկուն, անզգայուն ուրիշների նկատմամբ, ռիսկի դիմող, անհեռատես, չհաղորդակցվող և չսովորող: Այդ անհատները հանրակրթական դպրոցներում իրենց միշտ ագրեսիվ են պահում թե իրենց դասընկերների, և թե ուսուցիչների հանդեպ:

Աշխատանքային փորձը ցույց է տվել, որ սովորողներն ավելի մեծ սիրով են կատարում այն աշխատանքները, որոնք իրենց հոգեհարազատ են: Նրանք սիրում են, երբ իրենք ազատ են իրենց ընտրության և գործողությունների մեջ: Այստեղ ուղղակի ուսուցիչը պետք է կարողանա ստեղծել առողջ միջավայր, որտեղ սովորողները միմյանց կօգնեն, իրար կարծիք հաշվի կառնեն:

Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռք բերված ինքնուրույնության արտահայտում է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց:

Ինքնուրույն վերահսկողությունը և ինքնաստուգումը վերահսկողության հատուկ ձև է: Երբ աշակերտը օբյեկտիվորեն գնահատում է ուսուցչի աշխատանքը: Այստեղ կարևոր է, որ աշակերտները սովորեն աշխատանքը գնահատել ոչ թե մեխանիկորեն, այլ կարողանան հիմնավորել իրենց գնահատականը:

Նախքան դասերի պլանում ինքանստուգում մտցնելը, ուսուցիչը պետք է երեխաներին փոխանցի ստուգման ալգորիթմները: Օրինակ՝ դուք երեխաներին խնդրում եք փոխանակել նոթատետրերը և ստուգել վարժությունները միմյանց հետ: Սովորողները պետք է ոչ միայն ուղղեն սխալները, այլև արդարացնեն ուղղումը – բացատրեն կանոնը և դրա կիրառման պայմանները:

Հետևաբար, նախ խորհուրդ է տրվում ուսուցչի հետ համատեղ անցկացնել կոլեկտիվ ստուգում: Այսինքն՝ ամբողջ դասարանը լսում է աշակերտի պատասխանը, ապա կատարվում է սխալների կոլեկտիվ ուղղում, ուղղումների համար արդարացումներ են խոսվում: Այսպիսով, երեխաները մտապահում են գործողությունների ալգորիթմը և սովորում գնահատման օբյեկտիվությունը:

***Ինքնուրույն վերահսկողության մեթոդները***

1. **Աշխատանք զույգերով**:

Սա ամենատարածված տեխնիկան է: Դուք կարող եք խնդրել աշակերտին գրասեղանի մոտ հարևանի հետ ստուգել տետրում ավարտված վարժությունը, ստուգել տեսական նյութի իմացությունը: Շատ տարբերակներ կան: Այս մեթոդը թույլ է տալիս վերահսկել նյութի յուրացումը, քանի որ զույգերով փոխադարձ ստուգումը կարելի է իրականացնել դասի ցանկացած փուլում. տնային աշխատանքները

ստուգելիս, նոր թեմայի կոնսոլիդացիայի փուլում, թեմայի վերաբերյալ գիտելիքների ամփոփում և այլն:

2. **Աշխատանք խմբերով**:

Այստեղ աշխատելու ավելի շատ տարբերակներ կան:

- գրավոր աշխատանքների կատարումը: Մեկ ընդհանուր առաջադրանք տրվում է մեկ խմբի: Տղաները առաջադրանքը լուծում են միասին՝ միաժամանակ վերահսկելով իրենց «կոլեգաներին»:
- բանավոր աշխատանքների կատարումը: Բացի այդ, տրվում է մեկ առաջադրանք և նշանակվում է խմբի գլխավոր խորհրդատու: Խորհրդատուն հարցազրույց է անցկացնում 2-3 հոգու հետ, մնացածը վերահսկում է գնահատման օբյեկտիվությունը: Այնուհետև խորհրդատուի դերը անցնում է մեկ ուրիշ աշակերտի մոտ:
- նախագծի իրականացում: Մի խումբ աշակերտների տրվում է առաջադրանք, որի իրականացման համար կատարվում է մի քանի օր: Այն կարող է լինել վերացական, զեկույց, ներկայացում թեմայի վերաբերյալ, նախագիծ: Կատարված աշխատանքը կներկայացվի խմբից ընտրված աշակերտի կողմից:

Ուոլթեր Միշելը ապացուցվել է, որ ինքնատիրապետում ունեցող մարդիկ կյանքում ավելի հաջողակ են: Նրանք արագ հասնում են սահմանված նպատակներին և ինքնադրսևորվում տարբեր ոլորտներում: 40 տարիների ընթացքում Ուոլթերը հետևելով այդ երեխաներին, հոգեբանական թեստեր է անցկացրել, համեմատել նրանց ձեռքբերումները, կարիերայի աճը, անձնական կյանքը: Նրանք ավելի հաջողակ էին և կյանքի տարբեր ոլորտներում կարողացել են ինքնադրսևորվել:

Ինքնատիրապետումը դա սեփական զգացմունքները, հուզմունքները և վարքագիծը կառավարելն է: Ինքնատիրապետման պակասի ծայրահեղ դրսևորումը համոզմունքն է, որ «Այն, ինչը լավ է ինձ համար, ուրիշների համար նույնպես լավ է»: Դա կանխելու համար անհրաժեշտ է մարզել ինքնակառավարումը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ելնելով ուսումնասիրության արդյունքներից, ներկայացված տեսակետներից և դիրքորոշումներից՝ կարող ենք ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

Ժամանակակից մանկավարժական գիտությունը սահմանում է ուսումնական գործունեության էությունը: Ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքերը պարզաբանելու համար Վ.Դյաչենկոն ներմուծում է «ուսուցման կազմակերպման ընդհանուր ձևեր» հասկացությունը: Ուսուցման կազմակերպական ձևերը պատմական տարբեր ժամանակներում տարբեր են եղել և պայմանավորված են եղել հասարակության զարգացման մակարդակով, գիտության զարգացման աստիճանով:

Կրթության դասային-դասարանային համակարգը ձևավորվել է ուշ միջնադարում: Այսօր ամբողջ աշխարհում դասային-դասարանային համակարգը հանդիսանում է ուսուցման կազմակերպման հիմնական ձևը: Դասը մանկավարժական գործընթացի բջիջն է: Մանկավարժության նշանակալի մասը խտանում է դասի մեջ: Ժամանակակից դասին ներկայացվում են մի շարք պահանջներ՝ կրթական, դաստիարակաչական, զարգացնող և կազմակերպչական:

Դասի ճիշտ կազմակերպումը սկսվում է դասի համար կազմված պլանից, որում արտացոլվում են դասի ընթացքում կատարվելիք բոլոր գործողությունները: Դասի յուրաքանչյուր րոպեն պետք է օգտագործվի, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ դարձնել ուսուցումը:

Դասերը կարող ենք դասակարգել ըստ ուսուցման գործընթացը կազմակերպող դիդակտիկական նոր համակարգերի /ըստ պրոբլեմային ուսուցման, ըստ ծրագրավորված ուսուցման, ըստ անհատականացված ոուսուցման և այլն/:

Ժամանակակից դպրոցում դասի արդյունավետ անցկացման և դասի նպատակների հասնելու համար պարտադիր է դարձել զանազան մուլտիմեդիական միջոցների, ինտերակտիվ քարտեզների, տեսասահիկների կիրառումը դասի ժամանակ, աշակերտների ակտիվ ուսուցման կիրառումը, աշակերտին սոսկ ուղղություն տալով՝ նրան ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելն ու դասից դուրս աշակերտի

ինքնուրույն աշխատանքի խթանումը: Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Նորարարական աշխատանքի հաջողությունը, արդյունավետությունը և դրա ազդեցությունը դպրոցի զարգացման մեխանիզմի բովանդակության նորացման հարցում ամբողջովին կախված է կրթական գործընթացում համապատասխանության և նորարարության արդիականությունից, օգտակարությունից և իրագործելիությունից: Նրանք արդեն համապատասխան են միայն այն պատճառով, որ ունեն ընդհանուր կրթական նպատակ աշակերտների անհատական կրթությանն ուղղված ուսուցում և սովորողների դաստիարակություն, բացի դրանից դրանք պոտենցիալ օգտակար են, քանի որ իրականացվում են բազմամասնագիտական դպրոցի համակարգի ստեղծման միջոցով, ծնողների սոցիալական պատվերի հաշվառումով և աշակերտների ընտրությամբ:

Այսպիսով, ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերը, մեթոդները և տեխնոլոգիաները պետք է նպաստեն սովորողի ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Ինչպես ասել է Մ. Սարյանը՝<<Մարդը միայն ինքնուրույնությամբ է մարդ դառնում>>:

Այնպես որ, նորարարական աշխատանքը միշտ բերում է ուսուցիչների և աշակերտների անհատական ներուժի զարգացման փոփոխություններ, քանի որ այն նպաստում է դրդապատճառի բարձր մակարդակի զարգացմանը:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Առաջարկում ենք պատմության դասընթացի շրջանակներում աշակերտներին հանձնարարել ուսումնասիրել ինքնուրույն ուսուցման հիմնախնդիրները և դրանց առաջացման պատճառները պատմական տարբեր ժամանակաշրջաններում:
- Առաջարկում ենք պատմության դասընթացի շրջանակներում աշակերտներին հանձնարարել ուսումնասիրել ինքնուրույն ուսուցման հիմնախնդիրների լուծման հիմնական միջոցները պատմական տարբեր ժամանակաշրջաններում:
- Առաջարկում ենք վերոնշյալ երկու հանձնարարությունների համատեքստում աշակերտներին հանձնարարել իրականացնելու վերլուծություն պատմական տարբեր ժամանակաշրջաններում առկա ինքնուրույն ուսուցման խնդիրների և դրանց լուծման համար նախատեսված միջոցների վերաբերյալ, իրականացնել դրանց գնահատում:
- Առաջարկում ենք դասարանում կազմակերպել քննարկում պատմական տարբեր ժամանակաշրջաններում առկա ինքնուրույն ուսուցման խնդիրների և դրանց լուծման մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ, աշակերտներից ստանալ հետաքրքիր առաջարկներ առկա խնդիրների լուծման առումով:

# ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1 Ամիրջանյան Յու., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ մանկավարժական բուհերի աշակերտների համար, երկրորդ՝ բարեփոխված հրատարակություն, Երևան, 2005թ.,

1. Մանկավարժություն (թարգ. Հ. Հարությունյան), Երևան, 1948թ.
2. Մկրտչյան Ա.: Այրեկսի բուհական ծրագրի կենսագործումը և կրթության բարեփոխումների ընթացքը Հայաստանում, Մանկավարժություն, 2004թ.
3. Մկրտչյան Մ.: Ժամանակակից դիդակտիկայի հիմնահարցերը (ըստ Դյաչենկոյի), Մանկավարժություն, 2005թ./ 5,
4. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2012թ.
5. Анцибор М.М. Активные формы и методы обучения. Тула 2002г.
6. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006г.
7. Беспалько В. П. Педагогика и прогрессивные технологии обучения. М., 1995г.
8. Библер В. С.. От наукоучения – к логике культур. М., 1991г.
9. Бордовская Н.И., Реан А.А. Педагогика. Учебник для вузов СПб: Издательство "Питер", 2000г. - 304 с. - (Серия "Учебник нового века")
10. Бухарова Г.Д., Старикова Л.Д., Ред. Г.Ф. Кученкова, Общая и профессиональная педагогика, Москва, Издательский центр “Академия” 2009г.